

ԿԵՆՍԱԳԻՐ ԵՒ ՆԿԱՐԱԳԻՐ

ԵԶՆԿԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿՈՂԲԱՑԻՈՅ

(ՏԼս յ' էջ 161)

ԱՅՍՈՒՀԵՏԵԻ քանի մի ամաց շրջանի մէջ (ցթ. 450) Հայաստան թէպէտ նուաճեալ 'ի Պարսից, այլ խաղաղ կ'ապրէր ըստ Եղիշեայ, մինչև վերջապէս յանկարծ շրջեցաւ նորա բախտն. իշխողք դիւակահի մզմամբ սկսան 'ի հեթանոսութիւն հրաւիրել զՀայս թղթով մի. իսկ Հայք սրով պատասխանեցին. բայց յառաջ քան զսուր գրով՝ Արտաշատու ժողովոյն մէջ (թ. 450), Եղնկայ 60—64 ամեայ հասակի մէջ: Հոն խմբուեր էին բազմաթիւ հովիւք եկեղեցւոյ, որոց մէջ կը փայլէր և ինքն Եղնիկ (Եղշ. 46, փրպ. 125) հովուական մեծվայելութեամբ, պատկառելի գինքն քաջ ճանաչող ականքին՝ զերապանծ հանճարովն և շնորհաշունչ շրթամբ:

Յառաջ քան զայդ՝ դեռ քահանայ՝ անշուշտ առնթրեցաւ զսուրեր էր Աշտիշատու Գ. ժողովոյն մէջ (թ. 435), որ զումարուեցաւ առթիւ իւր և ընկերացն Յունաստանէ դարձին. իբր եպիսկոպոս՝ Շահապիւնու Ա. բարեկարգական ժողովոյն մէջ (թ. 447), որովհետև այնչափ մօտ էր իւր թեմին. յետ Արտաշատուն՝ Գունայ Ա. ժողովոյն մէջ (թ. 452), որոցն Յովսեփայ յաջորդի ընտրութեան համար: Սոցա ներկայ լինելուն յայտնի վկայութիւն չկայ, սակայն հաւանական է ըստ յիշեալ հանգամանաց, մանաւանդ երբ այժմ տեսնեմք՝ թէ Բագրեւանդայ զահակալն օ՛րբան կարեւոր էր ժողովոց մէջ:

Արտաշատու ժողովոյն մէջ Եղիշէ կաթողիկոսին զահակից եպիսկոպոսաց մէջ Եղնիկը կը հաշուէ երրորդ, իսկ փարպեցին վեցերորդ: Սա ջանացեր է զասել զանոնք նախարարութեանց պատուոյ կարգաւ, սակայն սխալած կը թուի. Եղիշէինն աւելի ստոյգ է: Նախ՝ զի Եղիշէ ականատես էր. իսկ Ղազար յետոյ և ականջալուր: Երկրորդ՝ Բագրեւանդայ աթոռոյն այգչափ բարձրութեան 'ի ժողովա՝ վկայ ունիմք առաջին՝ Ներսէս Բ. կթղ. Աշտարակեցւոյն առ եպիսկոպոսունա զրած թուղթը. երկրորդ՝ նոյն կաթողիկոսի խմբած Գունայ Գ. ժողովոյն (թ. 551) թուղթը, որք Եղիշեայ յիշուած եպիսկոպոսաց յաջորդները ճիշդ նոյն կարգաւ կը թուեն՝ որով Եղիշէն, թէպէտ

ոմն նուազ և ոմն աւելի անձինք կը յիշեն. և նոյնպէս Բագրեանդայ զահուկալը կը նախադասեն քան զՍիւնեացն, Արծրունեացն և այլն՝ ժողովակա-նաց ցուցակի մէջ, զնշելով չորրորդ։ Միայն թէ աստ Բագրեանդայ երկու եւ պիսկոպոսունք կը յիշուին, Տիրակ և Մարկոս, թեմն ահագին ընդարձակու-թեան համար յետ Խորենացոյն երկու հովուաց վերայ բաժանուած լինելով՝ ըստ զաւագանագրոց. առաջինն իւր բարձրագոյն պատիւը պահելով, և երկ-րորդն բաւական ստոր քան զայն, որ և տասներորդ կը հաշուի Դունայ նոյն ժողովոյն մէջ։ Անշուշտ Ժ. զարուն առաջինն արդէն խոնարհած կամ՝ վեր-ջացած, և երկրորդին մնացորդը միայն տեսնելով Ուխտանէն (1) և գուցէ ան-ծանօթ լինելով հին կարգին, կամ անվաւեր յիշատակարանէ հանած՝ Լուսա-ւորչին ընծայուած նախաթոռ եպիսկոպոսաց կարգացուցակի մէջ՝ Բագրեանդայ եպիսկոպոսը երեքատասներորդ կը հաշուէ. մինչ ընդհակառակն կը յիշուի (2) թէ աթոռոյն վաղեմի և ստաւելագոյն բարձրութիւնն Եզնկայ նախորդաց զեղծանել է տուեր։ Եւ վերջապէս այս ստոյգ է ըստ չորս և աւելի վկայու-թեանց՝ թէ եպիսկոպոսաց պատուոյ աստիճանն (յայտնի չէ ի՞նչ պատճառաւ) նախարարաց կարգի համեմատ չէր մինչև Զ զար, որպէս կ'ուզէ կարծել տալ Փարպեցին, այլ տարբեր. և Եզնիկ Արտաշատու մէջ այն կարգաւ բազ-մեր էր՝ զոր Եղիշէն կը յիշէ։

Թիշեցիւնք՝ թէ Թուղթ մի գրեցին առ Պարսիկս (3)՝ ի պատասխան, որ էր ջատագովութիւն քրիստոսական կրօնից՝ զոր նոքա կը նախատէին։ Այդ նա-մակը ժողովոյն հաւանութեամբ ի հարկէ մէկ հոգի գրեց. ո՞վ էր այն։ —

1. Ուխտ. Պատմ. Ա. հատուած, Գլ. 2.

2. Տես յԱրարատ տեղագրութիւն Հ. Ղ. Վ. Ալիշանի, էջ 523:

3. Ի Պարսից առ Հայս այլ Թուղթ կ'աւանդէ Եղիշէն (էջ 41) և այլ Փար-պեցին (էջ 121). ուստի տեսնեմք՝ սոցա որն է ստոյգ. — Յազկերտէն ըստ Պա-զարայ զրկուած Թղթոյն մէջ գրուած է, « Զօրէնս մեր զստոյգ և զարգար գրե-ցաք և տուաք բերել առ ձեզ ». ըստ այդմ՝ Պարսից կրօնի յիշեալ վարդապե-տութիւնն զատ Թղթով զրկուած կ'իմացուի, և երկուքն այլ նոյն ժամանակ. մին հրաւէր ի մոգութիւն և միւսն մոգութեան զուտ վարդապետութիւն. առաջինն երկրորդին ընդունելութեան համար, Ընդ հակառակն ըստ երկու պատմչաց ևս պատմութեան ընթացքն մի Թուղթ կը զնէ և ոչ երկու. ապա նոյնպէս հասկա-նայի է նաև Փարպեցոյն խօսքը. այս ինքն՝ մեր վարդապետութիւնը գրեցինք սոյն Թղթոյ մէջ և զրկեցինք։ Եւ յերաւի Եղիշէի մէջ թէ յիշեալ վարդապետու-թիւնն և թէ ի պարսկականութիւն հրաւէրն մի Թղթոյ մէջ պարունակուած է վայելուչ եղանակաւ. ուր առաջինն կը պակասի Փարպեցոյն աւանդածի մէջ. ապա ուրեմն Եղիշէինն է ստոյգ։ Ուրիշ փաստ մի ևս այս է՝ որ Եղիշէի Թուղթն նամակի պատշաճաւոր ձևով կը սկսի, Միհրներսեհի չքադիր անուամբ և մեծա-րանաց ողջունիւ, և կանոնաւոր կերպով կը վերջանայ ըստ նիւթոյ նամակին. իսկ Փարպեցոյնն այդ ամենէն զուրկ է, զոչցեա պատմութեան պարբերութիւն մի լինելու. և այնչափ համառօտ քան զմիւսն, որ Թուի՝ թէ պարզ յիշած լինելու համար գրեր է զայն Ղազար։ — Իսկ զայլով Հայոց Թղթոյն, կ'ըսեմք թէ մի

Փորը 'ի շատէ դիտեցինք տեսանք՝ թէ ո՛րչափ անգամ եկեղեցին Եզնիկը յառաջ անցուցեր է այդպիսի հասարակաց պայքարներու մէջ, թէ նորա գրիչը Մեսրոպ ախոյան կը կանգնէր մոլորութեանց դէմ. և պիտի տեսնեմք ևս՝ թէ յետ մի կամ երկու տարւոյ մի և նոյն հովիւք նման առթիւ վերստին յարուցին զայն անաւոր պատերազմող նոյն Պարսից և ուրիշ մոլորութեանց և հերետիկոսութեանց դէմ. Այս հանգամանք կարծել կու տան՝ թէ և Արտաշատու թղթոյն հեղինակ ինքն Եզնիկ էր. ոչ եթէ իբրեւ այլք անկարող էին գրել զայն, այլ որովհետեւ մեծ վարկ ունէին նորա վերայ՝ թէ ըստ զօրութեան գրչին և թէ ըստ բազմապիմի հմտութեանց՝ մոգութեան, պարսկերեն, նի, ասորական և արաբական և այլն, ուզեցին՝ ինչպէս յետոյ նաեւ այժմ՝ որ նայն հօր գրիչն լինի փող և թարգման իրեանց սրտին. Եւ որպէս զի մեր այս կարծիք անհիմն է անոտի չհամարուի, Եղիշեայ թղթէն և Եզնիկայ ազանդոց զրքէն քաղեմք քանի մի նման իմաստներ և լեզուի բացատրութիւններ և համեմատեմք, ընթերցողաց թողլով նկատել երկու երկասիրութեանց մէջ գտուած մի և նոյն իմաստասիրական մանրակրկիտ ոճը, բառից ընտրութիւնը, բացատրութեանց նմանութիւնը և համառօտութիւնը, շարադրութեան եղանակը, այլովքն հանդերձ:

Թղթոյ (նոյն է թէ և երկու լինէր) պատասխանն Հայոց կողմէն հետեւաբար մի էր և ոչ երկու. Նոյնը կը հաստատէ և Փարպեցին՝ ըսելով ժողովոյն ընծայած թղթոյն մէջ (էջ 128). « Այլ վասն օրինաց ձերոց, զոր գրեալ էր և տըւեալ բերել առ մեզ, մեք ձեզ ոչ երբէք լսեմք »: Վերը զանազան թղթոց կերպարանաց ներքոյ նկատուած երկու կետերու պատասխանքն հոս մի թղթոյ մէջ բովանդակուած են: Բայց այս թուղթ մեծապէս կը տարբերի Եղիշեայ թղթէն թէ բովանդակութեամբ և թէ քանակով. և մեզ վերջինն ընդունելի է. առաջին՝ զի Եղիշէն՝ որ հոն ժողովոյն ներկայ էր, յայտնի է թէ քան զՎազար լաւ գիտէր՝ որն է հարազատ թուղթ ժողովոյն, — զի Վազար ևս իւր թուղթը նոյն ժողովոյն կու տայ, — և ըստ այնմ ևս աւանդեց մեզ. Երկրորդ՝ Պարսից թղթոյն վերջը Եղիշէն գրուած է. « Ամ արարէք բան առ բան նամակիդ պատասխանի, և կամ արիք 'ի դուռն եկայք »: և Փարպեցին այդ խօսքը իւր աւանդածին մէջ (էջ 133) այսպէս պարզեր է. « զկարծեցեալ օրէնսդ (քրիստոնէութեան) առ մեզ գրել հրամայեցաք ձեզ »: և ահա այդ իմաստով բան առ բան պատասխան Եղիշէնն է, և Փարպեցւոյն գրեթէ ոչինչ է. դարձեալ Եղիշէն նպատակ չունէր ժողովոյն թուղթը երկարելու. բայց Վազար ունէր համառօտելու, պատմութեան կապն ընդերկար չընդհատելու համար. մանաւանդ որ արդէն Եղիշէն մէջ ամբողջովին կար այն: Երրորդ Փարպեցւոյն աւանդած նաև տոյն թուղթս զուրկ է այնպիսի ծանր նամակի պարտապատշաճ ամէն նշանէ և կանոնէ՝ զոր վերը նկատեցինք Միհրնէրսեհի թղթոյն վերայ. Զորորդ՝ Եղիշեայ թուղթն յատուկ է, ինչպէս այժմ պիտի տեսնեմք, ժողովականաց միոյն՝ Եզնիկայ. իսկ Փարպեցւոյն ոճն և լեզուն նոյն ինքն պատմչին են, և իմաստներն փոքր 'ի շատէ միւս թղթոյն. (տես և Ղր. Խալաթ. էջ 76-78):

ԹՈՒՂԹ ԵՂԻՇԷԻ

Էջ 50. « Մինչ չե արարեալ էր նորա՝ 'ի կանուկ գիտութեանն իւրում տեսանէր զարարածս » :

Էջ 56. « Զորեք յեղանակք անրդ-գայութեամբ լծեալ են 'ի գործ հարկաւորութեանն՝ չյափշտակելով զկարգ պատուոյն 'ի միմեանց » . — 55. « աշխարհս նիւթեղէն է, և նիւթքս որիչ որիչ են և ընդ միմեանց հակառակ. մի է արարիչ հակառակորդացս, որ ածէ զնոսա 'ի սիրելութիւն հաւանութեամբ » :

Էջ 54. « Եթէ կամին՝ և դեք բարի լինին » :

Էջ 56. « Գտանի ջերմութիւնն յուրիւղոյն 'ի քարինս և յերկաթս, և սակաւագոյն յօդ և 'ի ջուր... իսկ օդն թափանցանց է ընդ հուրն և ընդ ջուրն » :

Էջ 53. « Ահաւասիկ Արհմն և Որմիզդ 'ի հօրէ ծնան և ոչ 'ի մօրէ... միսս ևս այլ ծաղրաղոյն քան զայդ » :

Էջ 58. « Ամենայն արարածք... ոչ երբեք անցանեն ըստ եղեալ սահմանն իւրեանց » :

Էջ 49. « Ոչ սկիզբն առեալ յումեքէ լինել Աստուած » :

Էջ 55. « Թողեալ զարարիչն՝ արարածոյս զերկրպագութիւն մատուցանէր » :

Էջ 50. « Արարածոցս... սկիզբն արար լինելոյ, ոչ յընչէ՝ այլ յոչընչէ » :

Էջ 56. « Օդն թափանցանց է ընդ հուրն և ընդ ջուրն » :

ԵՂԻ ԱՂԱՆԴՈՑ

Էջ 235. « Մինչ չե արարեալ էր զարարածս 'ի մաի իւրում ունէր յաւաջգիտութեամբ զպայման կազմածոյ արարածոց » :

Էջ 17. « Այլ նա աւասիկ իբրև զկառս իմն լծեալ 'ի չորից երիվարաց զաշխարհս տեսանեմք, 'ի ջերմութեանէ՝ 'ի ցրտութեանէ՝ 'ի ցամաքութեանէ՝ և 'ի խոնաւութեանէ. և զօրութիւն իմն ծածուկ կառավար, որ զչորս կազեցողսն ընդ միմեանս 'ի հայտութեան և 'ի հաւանութեան պահեալ նուսճէ(ր) » :

Էջ 152. Սատանայ « յորժամ կամի՝ կարող է զգօնանալ » :

Էջ 249. « Ընդ օդս հուր խառն է... և զի ընդ ջուրս հուր խառն է, 'ի քարանցն հանելոյ 'ի ջրոյ... յայտ յանդիման ցուցանի... և օդ ընդ ջուրս և ընդ երկիր խառն է » :

Էջ 135. « Որ մեծի ծաղու արժանի է՝ եթէ ինքն (Զրուան) հայր իցէ և ինքն մայր » :

Էջ 63. « Եւ մարդն... ըստ Աստուծոյ երկիրդին սահմանս արտաքոյ ելեալ անաստէ » :

Էջ 6. « Ոչ սկիզբն յումեքէ առեալ լինելոյ » :

Էջ 11. « Զարժիչն... թողուլ, և շարժնոցն... երկրպագութիւն մատուցանել » :

Էջ 104. « Ոչ յումեքէ առեալ սկիզբն լինելոյ » . — 7. « Եցոյց յոչընչէ յինչ զչէսն » :

Էջ 220. « Լուսաւորութեան արեւուն... ընդ յատակութիւն ջրոյն օդով թափանցանց անցեալ » :

Այսչափ համառօտութիւն բաց աստի կան նաեւ բազմաթիւ այնպիսի բառեր. բառից արմատից վերայ այլ և այլ ածանցմունք, բարդութիւնք կամ կրճատմունք, նոյնպէս և բայից վերայ, և այլն, որք հազիւ երբէք կը գործածուին այլ մատենադրաց մօտ, մինչ իշխակայ համար սովորական և ստէպ ստէպ գործածական են: Այս համեմատութիւնս կը ցուցնէ թէ այդ երկու երկաւսիրութիւնք ծնունդ են մի և նոյն գրչի, այնչափ տարբերութեամբ՝ որ զանազան ժամանակաց մէջ և յիրերաց անկախ գրուած լինելով, միմեանց նման են և ոչ նոյն: — Եղնկայ այս թուղթն էր՝ որ զղրդեց Պարսից արքունիքը և պետութիւնը, կ'ըսէ Եղիշէ (էջ 68), և կը հիացնէր շատերը, որք « առաւել քան ընդ ճարտարաբանութիւնն՝ ընդ համարձակութիւն աներկիւղութեանն զարմանային »: այդ երկու կետերով ևս նշանաւոր էր այն:

Այս հաւաստիքն՝ թէ Կողբացին է գրող Արաշատու ժողովոյն նամակին, և հետեւաբար ինքն հոն ներկայ էր, հաստատութեան կը փոխէ հաւանակաւորութիւնը այն ընդհանուր կարծեաց՝ թէ հոն յիշուած ֆազրեանդայ Եղնիկ եպիսկոպոսն ինքն էր: Բոլորովին օտար և ձրի կը լինի առ այս ըսել՝ թէ այն տեղ թերեւ Եղնիկ անուամբ երկու անձինք կային, Կողբացին և Բաղրեւանդացի. որովհետեւ նախ՝ շատ զժուարիւն է, որ յարմարական Եղնիկ աւանունն՝ որ է որթ, մի և նոյն ժամանակ երկու անձանց վերայ միանգամայն դրուած լինի, և երկուքն այլ եկեղեցականութեան վիճակուած լինին. իսկ թէ այդ անունն վաղուց կայ եղեր Հայոց մէջ, չեմք գիտեր և հաւանական չէ, որովհետեւ և ոչ յետ Կողբացւոյն այլ ևս կը յիշուի. որ թէ սովորական անուն լինէր, զուցէ երբէք կը գործածուէր՝ պատմութեան կամ զինչ և է յիշատակարանաց մէջ յիշուած անթիւ անձանց միոյն վերայ. երկրորդ՝ այդու երթալորած կը լինիմք՝ թէ Թարգմանչաց պայծառութեան սոյն ժամանակի մէջ, յորում մեծն Սահակ Կողբացւոյն ընկերներէն և այլ արժանաւոր անձինք եպիսկոպոս կը ձեռնադրէր (Կոր. 14, 16, 17) ազգի առաւել յառաջադիմութեան համար, նա այդ պատիւը զլացեր է 'ի ֆեստ հայրենեաց այն անձին՝ որոյ իմաստութեան, համբաւոյն և աւելի քան զբաղումն (եթէ չըսեմք և քան զամէնն) ունեցած արժանաւորութեան հետ զօդեր էր իւր և այլոց բաղանդակ սէրը: Այդ կարծիքն, եթէ հնար է ունել, անգոր է և աւելորդ՝ ցորչափ չյայտնուի որոշակի՝ թէ Կողբացին եպիսկոպոս չէ եղեր բնաւ, այլ սոսկ քահանայ մնացեր է. և ընդ հակառակն աւելի հաւատարիմ է հակառակ ընդհանուր կարծիքն զոր յառաջ յիշեցինք (Բազմ. էջ 169):

Կը խմբուի Աւարայրի հուշակաւոր բազմադէտ պատերազմն (թ. 451), և կը վերջանայ վկայական անկմամբ Հայոց զօրականաց: Այսուհետեւ բաց են ամենուն հանդէպ բոլոր պատահարք ժամանակին, թէ ի՞նչպէս առաջնորդութեամբ անհամար ուրացողաց և բիւր նենգաւոր հնարիւք՝ սկսան Պարսիկք որսալ անտէր հայ ժողովուրդը՝ 'ի նժար մահաւ կամ ուրացութեան: Ի՞նչ գաւն տեսարան էր այս եկեղեցւոյ սուրբ հովուաց առջև. հաւատք և կրօնք օսնակոխ կը լինին, ի՞նչպէս պաշտպանեն զանոնք առանց զինու, մանաւանդ

որ իւրեանց միջէն արիագոյնք՝ Ղևոնդ, Սահակ և Յովսէփ շղթայից մէջ կը հեծեն։ Կը ժողովին՝ կը խորհին, և միակ զէն անվեհեր լեզուն կը տեսնեն։ Բայց շոցամէ ոչ որ կը համարձակի յասպարէզ գալ։ Եւ ի՞նչ՝ միթէ իւրեանց անձանց նկատմամբ այդ նուաստ համարման արժանի՞ էին նորա, այն հայալարծ կամ հեղինակարժ բերաներն, թէ մանաւանդ կը ցանկային այդ պաշտօնն աւելի զօրաւորագունին յանձնել։ Մեզ ախորժելի և պատշաճ կը թուի վերջինս ընդունել։ Բայց ո՞ւմ յանձնել այդ մեծ և վտանգաւոր գործը. — ամենուն բերանէն « Եզնիկ » կը լսուի. « Մեզ հարկ եղև, կ'ըսէինքն իսկ Եզնիկ, 'ի սիրոյ բարեկամաց, և յոչ ուղիղ հայելոյ ընդդիմակացն, ըստ մերում սկարութեան ապաւինեալ յԱստուծոյ շնորհսն, մխել 'ի խնդիր ճառիցս » չորից, (էջ 22)։ Այդ բարեկամք, և սիրելի բարեկամք եսլիսկոպոսի՝ Եզնիկայ, որ այդքան հոգ կը տանին հաւատացելոց փրկութեան, եկեղեցւոյ պայծառութեան, ո՞չք կարող են լինել՝ եթէ ոչ նոքա զորս պլուր (Յազմ. էջ 10, 14) և հոս յիշեցինք, այսինքն տեսուչք և հովիւք նոյն եկեղեցւոյ, դասակիցք և ծանօթք Եզնիկայ։

Ինչպէս ըսինք, յետ մեծ պատերազմին (թ. 451—452) գրեց Եզնիկ Պարսից դէմ, որովհետև ուրիշ ժամանակ չէր կարող գրել. նախ՝ զի նախորդ տարիներու մէջ 'ի սկզբան ենթակայ լինելով ազգն նոցա քաղաքական հարստահարութեանց, նա կը զգուշանար այդու նոցա զայլոյթը զրգուելէ՝ 'ի փաստ ազգին։ Երկրորդ՝ վերջին ամաց մէջ Հայաստան նոցա ձեռաց տակ աստուած պաշտութեամբ և խաղաղ կ'ապրէր, յորս նոյնպէս անդէպ և անպատշաճ էր գրել և գրգռել։ Երրորդ՝ Եզնիկ ակնարկ մի գործեց՝ « յոչ ուղիղ հայելոյ ընդդիմակացն » ստիպիմ՝ գրել, որով կը ցուցնէ թէ իւր գրելու ժամանակ ելեր էին հակառակորդներ՝ որք ջատագով կը հանդիսանային նորա եղծած մոլորութեանց. և գրեց՝ որ անմեղաց, որոց լսելիքը կը խանդարէին, « լինիցի զճշմարիտն ուսանել » . և այդ կը յարմարի միայն յետ պատերազմին, երբ պարսկական բռնութիւնն զրազաշտականութեան հետ մուտք բացաւ 'ի Հայս նսև այլ մոլորութեանց. և անյարմար է զայն՝ իբր Թաղկերտին առաջին հալածանաց առթիւ՝ գրուած՝ դնել 'ի թ. 441—445, հիմնուելով թեւեւ Եղիշեայ խօսքին վերայ՝ թէ եկեղեցին հանդիստ էր « մինչև յամն յերկրորդ Թաղկերտի » (էջ 12), որպէս թէ հալածումն սկսած լինի Թաղկերտի երկրորդ տարւոյն, թ. 439. զոր աւելի ուղիղ կը լինէր այսպէս կարգալ, « մինչև յամն (ժամանակ) յերկրորդ Թաղկերտի » . որովհետև Եղիշե պլուր (էջ 21) հալածումը յետ Թաղկերտի մետասաներորդ տարւոյն կը դնէ, որ է թ. 449. և այն ոչ եթէ Հայաստանի մէջ՝ ուր կային նոյն ժամանակ մարգպանն, սպարապետն և այլ երեւելի իշխանք՝ հեռի իւր ճիւղաներէն, այլ միայն 'ի Պարսկաստան գտուող հայ և օտար քրիստոնեայ զօրաց վերայ՝ յորս էր և Եղիշէն (էջ 27), և իւր բռնութիւնն չեկաւ 'ի Հայաստան՝ բայց եթէ նախ Միհրնբրսեհի թղթով (թ. 450). ապա և Եզնիկ յետ այն թուականին ունեցաւ իւր գրելու առիթը։ Չորրորդ՝ եթէ դի-

տեմք, Եղնիկ (էջ 113) իւր մէջ բերած մոզական վարդապետութիւնը Միհրնբերսեհի գրկած Թղթէն առեր է (1). որովհետեւ իւրն ըստ իմաստից, նոցա կարգին, բացատրութեանց և շատ անգամ՝ ըստ բառից նոյն է հորա հետ. միայն իւրն ուրեք ուրեք աւելի պարզուած է քանի մի յաւելուածոյ բառերով, և վերջին մասն համառօտուած. սորա համար իւր գրածը նոյն Թղթոյն իբրեւ երկրորդ պատասխան մի կը համարի նա (էջ 115). « Այսպիսի անհաւատ և դանդաղանաց բանից տխմարաց մտաց կարկատելոց՝ չէր պարտ ամենեւին բնաւ առնել պատասխանի » . և կամ գէթ, պատասխան ժողովրդեան մէջ բանիւ կամ գրով քարոզուածից դէմ. և հետեւաբար զայդ յետ Միհրնբերսեհի Թղթոյն և պատերազմին գրեր է :

Ինչ էր այդ ճառն. նա քրիստոնէական հաւատոց պաշտպանութիւն չէր, զոր արդէն նախորդ նամակաւն ըրեր էր. չէր նմաներ եկեղեցւոյ ջատագովաց դրուածոց, ինչպէս առաջինն էր. այսինքն աւելի զաշտպանութիւն քրիստոնէութեան քան եթէ մաքառումն հեթանոսութեան դէմ, որ թրեւս այնչափ մեծ յանցանք չէր լիներ. այլ էր անքաւելի եղեռն, ուղղակի կործանումն պարսկական կրօնից, որոյ վերնագիրն իսկ էր « Եղծ քէշին Պարսից » : Վէհնաձնական գործ. այնպիսի ժամանակ, երբ Թշնամին հայրենեաց ամէն անկիւնը իւր առջև բաց և անպատսպար գտնելով՝ ամէն բռնութիւն ՚ի գործ կը դնէ, այնպիսի ժամանակ՝ երբ փոքր իսկ անգէն ընդդիմութիւն մահաւամբ կամ գերութեամբ կը պատժուի, Եղնիկ սիրով յանձն կ'առնու բարձրացնել իւր ազգու ձայնը բովանդակ Հայաստանի մէջ, Թշնամեաց առջև, և հատուցանել՝ որպէս շատ հաւանական էր՝ մինչև ՚ի Պարսկաստան, « ընդ Պարսից քէշին գտողս, ապաւինեալ ՚ի շնորհն Աստուծոյ, մատչել ՚ի պայքար » (էջ 111) : Այսու կը յուսար որ բոլորովին պարշին հաւատացեալք նոցա առաջարկած կրօնքէն, և ուրացողք դառնան իւրեանց բռնած յիմարութեան ճանապարհէն. — Այս հանգամանքի մէջ քաջ կը պարզուի Եղնիկայ ոգին, մահու դէմ ունեցած արհամարհանքն և անվեհեր սիրտն. սկսելով իւր գրութեան նոյն իսկ առաջին տողէն՝ « Այսպիսի անհաւատ և դանդաղանաց բանից տխմարաց մտաց կարկատելոց » ..., կը տեսնուի՝ Թէ օրքան մեծ և արդար բարկութեամբ լցուած էր Պարսից անօրէն ձեռնարկներու դէմ, սաստիկ զգածուած լինելով եկեղեցւոյ վտանգի մասին. և իւր գրիչն այնչափ աւելի ազդուութիւն զգեցեր է, որչափ նա քաջ հմուտ գտուեր է նոցա կրօնի բռնականութեան, և մինչև իսկ միմեանց հակառակ այլ և այլ վարդապետութեանց, ինչպէս կ'ըսէ. « քանզի ընդ գրովք յեն կրօնքն (ուսկի մէջ), երբեմն զայն ասեն՝ և այնու խաբեն, և երբեմն զայն՝ և սովին պատրեն գտիմարս » (էջ 112). և գրութեան ընթացքի մէջ այլ և այլ տեղեր յայտնապէս կու տայ իւր հմտութեան հաւաստիքը :

1. Սորա նպատակն այն էր, որ Պարսից Թուղթն մոզաց և մոզպետաց ձեռամբ գրուած լինելով (Եղը. ԱՅ), իբր հաւատարմագոյն աղբրէ, աւելի փստահութեամբ կարող էր կռուիլ նոցա մոլորութեան դէմ :

Ի՞նչ եղաւ այդ պայքարի հետեանքն։ լռութիւն է. բայց կը թուի՝ թէ պահեց Ստոտած իւր նախանձաւոր պաշտօնեայն, և չընկաւ թշնամեաց ձեռքը. ապա թէ ոչ իւր այդպիսի մահուան յիշատակն Եղիշէի կամ փարպեցւոյ գրչէն չէր վրիպեր, ինչպէս այլ քահանայիցն՝ որք ապանուեցան։

Տառից գիտէն յետոյ յոյն լեզուի հետ նաև գիտութիւնն իւր զանազան ճիւղերով սկսեր էր մուտ գործել Հայաստանի մէջ։ Հեթանոսաց, յոյն իմաստասիրաց և Մարկիոնի վարդապետութիւնք սկսեր էին ծանօթանալ հայ ուսանողաց՝ 'ի ձեռն մոլորեցուցիչ գրքերու, որք իւրեանց հրապուրիչ փայլով կը զարմացնէին և կը շփոթէին ընթերցողաց մտքերը. անփորձ ժողովուրդն թէպէտ չէր ուզեր հաւատալ նոցա, այլ մեծ կարօտ կ'իմանար լսելու նոցա հերքումը իւրեանց իմաստուն վարդապետներէն՝ շփոթեալ մասց խաղաղութեան համար (Եղծ աղնդ․ 68). մոլորեցուցչաց գողար լեզուի դէմ հարկաւոր էր ուրիշ ճշմարիտ՝ գողար՝ հուժկու և նոցա նենգաւոր քողը պատառող լեզու մի. հարկաւոր էր հանել այնպիսի ոմն, որ ոչ միայն նոցա դիմադրող համապատասխան ոյժ ունենայ, այլ և զօրութիւն խորտակելու զանոնք. և որում ընտանի լինի պատերազմելն այդպիսեաց դէմ։ Եկեղեցին ինչպէս Պարսից՝ նաև սոցա դէմ քան զամէնն յարմար կը տեսնէ Քաղըւանդայ եպիսկոպոսը. և ինչպէս 246 էջի մէջ ակնարկեցինք, այդ չորս աղանդոց ընդդէմ միանգամայն գրել կը խնդրէ։ Սորա հաւատարիք, նախ՝ ըսաւ Էջնիկ՝ թէ « մեզ հարկ եղև... մխել 'ի խնդիր ձառիցս », քանի մի ճառից։ Դա կարելի է որ հասկացուի նաև իրեւ մի ճառ. բայց մեկէ աւելի հասկանալ կու տայ սա երկրորդ փաստն. Էջնիկ երբ հեթանոսաց հերքումը, զոր քան զՊարսիցն աւաջ գրեց, պիտի աւարտէ, սոյն խօսքով կը վերջացնէ. « Ձհիւզայն կարծիս, որովք Յոյնքն մոլորեցան, բաւական համարեցուք առաջնոց բանիցն յանդիմանութեամբ վճարել. և ընդ Պարսից քէշին զտոյս, ապաւինեալ 'ի շնորհմն Աստուծոյ, մատիցուք 'ի պայքար » (էջ 111). Ես որ երկու ճառից մէջ կապ մի է, կը ցուցնէ թէ յետ հեթանոսաց խոկոյն Պարսից դէմ գրեց. և յետոյ մնացեալ երկուքը, որպէս կը հաւաստէ երկրորդ և երրորդ ճառից մէջ եղած կապն ևս (էջ 198). և չորսն այլ մի և նոյն ժամանակ շարունակաբար. ապա իւր խօսքն « մխել 'ի խնդիր ձառիցս » շորմը միանգամայն կ'ակնարկէ։ Սորա ուրիշ հաւաստիք մի է այն՝ որ թէ հեթանոսք և թէ Պարսիկք բարոյ և չարի երկու սկիզբներ կը գնեն ըստ նոյն ինքն Էջնիկայ (էջ 9, 18, 145), որոց դէմ կը կռուի երկու ճառից մէջ ևս. և Պարսից դէմ ոչ միայն առաջինն, այլ նոյն իսկ առաջին ճառի մէջ այլ (64—72...)- և իւր յիշատակարանն (էջ 22) եթէ միայն նոյն սկզբանց նկատմամբ է, այն պատճառաւ որ նոցա մօտ կը գտուի, — և չէ նկատմամբ չորս ճառից ևս, որոյ հակառակն կը թուի մեզ՝ այնու զի դեռ իւր գրոց գրեթէ սկիզբը կը գտուի, — հետեաբար կը վերաբերի թէ հեթանոսաց և թէ Պարսից վարդապետութեանց եղծման, և է դարձեալ զանոնք վարդապետողաց՝ « ընդդիմակացն » դէմ։

Թէպէտ լի էր Եզնիկ զբաղանօք՝ իւր վիճակի ընկարձակութեան և ժամանակին աղիտալի պատահարաց համար, սակայն միայն « 'ի սիրոյ բարեկամաց » յանձն կ'առնու այդ ծանր գործը, ծանր՝ նկատմամբ հանգամանաց ժամանակին և ոչ իւր կարողութեան: Դարձեալ որովհետեւ նա բնութեամբ սիրող չէր կըռքնեցու, և ոչ հետամուտ հակառակորդաց նուաճման. այլ կը գրէր 'ի ջատագովութիւն ճշմարտութեան և ցանկանալով նոցա դարձին, որպէս կ'ըսէ. « ոչ եթէ անիրաւութեամբ ինչ յաղթել ջանամք, այլ իրաւամբք զճշմարիտն ուսանել », (էջ 68): Շատ պիտի զարմանամք, եթէ մտածեմք՝ թէ Եզնիկ եկեղեցւոյ հալածողաց ձեռքէն փախած ծածկուած ամբողջի կամ ժայռի մի խորշը, չի դադարիր ոչ միայն հուլուել իւր հօտը, այլ և բովանդակ Հայաստանի կողմանէ կուտել մոլորութեան դէմ և այնու խրախոյս տալ հաւատացեցեց՝ ուկեղէն լեզուաւն և իմաստիւր: Հայ ազգն այլ կարող է պարծիլ իւր Ոսկեբերաներու և Ալմանասներու վերայ:

Հ. Վ. Ս.

Շարայարեղի

ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՒՍԱԲԱՌՈՒԹԻՒՆ

(Տես յ'էջ 225)

60. Աղուէսիկ.

Այս խաբերայ կենդանւոյն անուամբ քանի մի բոյսեր կան՝ իրարմէ տարբեր ցեղերէ. այս առաջին անունն ի լրոյ է, և թուի թէ աղուիսու սիրած խոտ. սառու գելի է, և նախ աղուիսու խոտակեր ըլլալն: Բայց հին բժիշկը նոյն իսկ Աղուիսու զանազան մասերէն գեղեր հնարած են:

61. Աղուէս-խրտուկ.

Չայս նշանակած է մեր Մշեցի Հ. Պօղ. Մէհհերեան, իբրեւ կէս մարդաշափ ճիւղաւոր խոտեղէն բոյս մի, գեղին գնտաձեւ ծաղկով, ախարժ ուտելի ոչխարաց. իբր թէ, երբ ճիւղերն հովէն խլուած քուլին՝ աղուէսք խրչրտոցի ձայնէն կու վախեն: Փափագելի է որ Եւրոպացի դիտնականք տեսնեն և իմացընեն ուսումնական անունը, կամ այնպիսի անուամբ կ'ընեն:

62. Աղուէսու խաղող.

Արաբերէնն ալ նոյն նշանակութեամբ « Անաս ըլ-Մայրայ. նոյնպէս Փ. Raisin